ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Նահապետն է նա, դարերի խորքից,
Ոտքերը փոշոտ, կապան պատռուած,
Հանդարտ քայլերով եկող, մեզ հասնող,
Քրտնաթոր դէմքն է սրբում իր թեւով:
Մարաւից պապակ շրթներն է թրջում,
Դարերի խորքից եկող հայեացքով
Դիտում է իր շուրջն ու խօսում փութով:

Նրա սրտի մէջ՝ անհուն բարութիւն,
Նրա աչքերում մեղրն է կարծես
Հալւում ու հոսում, եւ նրա շրթից
Դուրս եկող խօսքերն իրենով օծում:
Մարգարէն է նա Սինայից եկող,
Ասես Մովսէսն է ժայռից ջուր քամող,
Անապատում նա օձ է բարձրացրել,
Իր ժողովրդի վէրքերն է բուժել,
Մահուան դէմ դրել, մահուան է յաղթել:

Նահապետն է նա Սուրբ Գրքից եկած.
Ցաւն հայոց նրան լոյս աշխարհ բերեց,
Իր ցաւակցելով մեր ցաւը կիսուեց,
Ցաւից ու վշտից նոր ծաղիկ բացուեց
Մեր պարտէզներում եւ մեր սրտերում:

Նրա օրհնութեամբ երկնքից իջնող
Երազներն են մեր իրականանում,
Նրա փոխարէն ազգը իր սիրած
Հասել է արդէն դարեր ըղձացուած
Երազին անհաս՝ իր ազատութեան:

* * *

Հայրի՛կ դու հայոց, ննջի՛ր դու անդորր,
Պատգամն է քո, տե՛ս, դարձել կեանք մեզ նոր,
Ազատ եւ անկախ կեանքով ենք ապրում
Աւետեաց երկիր մեր հայրենիքում:

ՆԵՐՍԷՍ ՎԱՆԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@